ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ)

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2017

Պատասխանատու՝ ԱՍՏՂԻԿ ԱՎԵՏՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի գերմաներենի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան 4
2. Թեստի կառուցվածքը..... 5
3. Թեստի կառուցվածքային տեսակների համամասնությունը.. 5
4. Առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները և ձևաթղթի լրացման կարգը..... 6
5. Հնարավոր փոփոխություններ թեստերում ներառվող առաջադրանքներում ….....12
6, Առաջադրանքներում ընդգրկված նյութը..... 14
7. Կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները 17
8. Պատասխանների ձևաթղթի նմուշ 20

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2018 թ. միասնական քննությունների թեստերի նոր կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաթուղթը լրացնելու կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթղթի նմուշը, կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները:

Միասնական քննությունների թեստերի և կենտրոնացված (բանավոր) քննության հարցաթերթերի կառուցվածքը տրված է ուղեցույցում:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը ներառում է 20 առաջադրանք՝ 80 ենթաառաջադրանքով:

Թեստային առաջադրանքները հետևյալ երկու կառուցվածքային տիպերի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Առաջադրանքների կատարման համար հատկացվում է 150 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	50	50
2	Կարճ պատասխանով	30	30
	Ընդամենը	80	80

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝

- *Կառուցվածքը:* Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Նմուշ.

15. Ընտրել ճիշտ թարգմանությունը:

Die Lehrerin erklärt die neue Regel sehr ausführlich.

a) Ուսուցչուհին բացատրում է նոր կանոնը շատ մանրամասն:
b) Նոր ուսուցչուհին շատ մանրամասն բացատրեց կանոնը:
c) Նոր կանոնը շատ մանրամասն բացատրվեց ուսուցչուհու կողմից:
d) Ուսուցչուհին բացատրում է նոր կանոնները շատ մանրամասն:

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:
- *Ձևաթղթի լրացման կարգը*: Ընտրված տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրվում է «X» նշանը.



Կարճ պատասխանով առաջադրանքներ՝

Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն: Տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը՝ մեկ կամ մի քանի թվեր, պետք է գրել ինքնուրույն:

Ներկառուցվածքային տարատեսակները:

ա. Համարների ընտրությամբ ենթաառաջադրանքներ:

- *Կառուցվածքը:* Անհրաժեշտ է ընտրել և գրել պահանջին համապատասխանող բառերի համարները:

  Նմուշ.

43. Տրված նախադասության մեջ ընդգծված բառերից ո՞րոնք են ավելորդ:

Auf der Straße fragte er zu einen Unbekannten nach dem neues Weg zur der Gemäldegalerie.

1. Auf
2. zu
3. nach
4. neues
5. der

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Հնարքի լրացման կարգը:* Պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ, առավելագույնը՝ 5: Թվերի **հերթականության պահպանումը պարտադիր չէ**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:

43	2	4	5		

բ. Համապատասխանեցմամբ ենթաառաջադրանքներ:

- *Կառուցվածքը:* Տրված են նախադասությունների կամ բառերի երկու խմբեր: Անհրաժեշտ է II խմբից ընտրել I խմբում տրված նախադասություններին կամ բառերին համապատասխան բառեր կամ արտահայտություններ: II խմբում դրանց թիվը 1-ով կամ 2-ով ավելի է:

  Նմուշ.

  Համապատասխանեցնել նախադասության 2 հատված-ները: (Տրված տարբերակներից երկուսն ավելորդ են):

A. Sie hat manchmal Angst, _____.
B. Es ist nicht so einfach, _____.
C. Er meint, dass _____.
D. Sie musste im Bett bleiben, _____.

1. er sich auf die Prüfung gut vorbereitet hat
2. weil er sich schon gut fühlte
3. denn sie war so stark erkältet
4. diese Mathematikaufgabe schnell zu lösen
5. im Unterricht Fehler zu machen
6. schnell diese Mathematikaufgabe lösen

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Հնաթղթի լրացման կարգը:* Անհրաժեշտ է յուրաքանչյուր տառի ներքևի վանդակում գրել տարբերակի համարը՝ **ըստ իմաստային համապատասխանության**:

	A	B	C	D
78	5	4	1	3

գ. Տեղադրմամբ ենթաառաջադրանքներ:

- *Կառուցվածքը:* Ենթաառաջադրանքներում տրված է տեքստ, որում բաց են թողնված բառեր: Տրված 7 բառերից պետք է ընտրել 5-ը և ըստ իմաստային համապատասխանության գրել վանդակներում՝ **չխախտելով հերթականությունը:** *Նմուշ.*

74. Ընտրել բաց թողնված համապատասխան բառերը և վանդակներում համարները նշել ըստ հաջորդականության (տրված բառերից երկուսն ավելորդ են):

Das Buch hat eine sehr lange Geschichte, die mit _____ Erfindungen verbunden ist, zum Beispiel mit der Erfindung der Schrift, des Papiers und des Buchdrucks. Im Mittelalter ____ Bücher, vor allem in Klöstern, _____ Hand geschrieben. Sie waren sehr kostbar. Das änderte sich erst um das Jahr 1440. Johannes Gutenbergs Erfindung des Buchdrucks mit beweglichen Buchstaben und Satzzeichen _____ es möglich, eine größere Anzahl von Büchern auf einmal und somit _____ herzustellen.

1. von
2. wurden
3. billiger
4. machte
5. teuerer
6. zu
7. vielen

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:
- *Հնաթղթի լրացման կարգը:* Պատասխանը թվերի շարք է, որում թվերը պետք է դասավորել **ըստ իմաստային կապի հաջորդականության**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:



դ. Վերադասավորմամբ ենթաառաջադրանքներ:

- *Կառուցվածքը:* Ենթաառաջադրանքներում անհրաժեշտ է վերադասավորել միավորների համարներն ըստ **իմաստային կապի հաջորդականության:**

Նմուշ.

75. Դասավորել նախադասություններն ըստ իմաստային կապի հաջորդականության:

1. Man rief einen Krankenwagen. In der Klinik stellte man fest, dass das Bein gebrochen war.
2. Der Vater spielte mit seinem Sohn im Garten Ball.
3. Um den Ball zufangen, lief er rückwärts, stolperte über ein Spielzeug und fiel hin.
4. Danach konnte er sein linkes Bein nicht mehr bewegen.

- *Գնահատման չափանիշը:* Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- *Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը թվերի շարք է, որում թվերը պետք է դասավորել **ըստ իմաստային կապի հաջորդականության:** Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:



Ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու համար տրված է 5 հնարավորություն. 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 3-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների:
Ընտրովի պատասխանով առաջադրանքների պատասխանը փոխելու համար համապատասխան տեղերում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և այնուհետև համապատասխան վանդակում դրվում է «X» նշանը:
Օրինակ՝



Կարճ պատասխանով առաջադրանքի դեպքում համապատասխան տեղում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և լրացվում են թվերը:
Օրինակ՝



ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՍՏԵՐՈՒՄ
ՆԵՐԱՌՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ

2018 թվականին քննական թեստերում շտեմարանային առաջադրանքները կարող են ներառվել որոշ փոփոխություններով՝ պահպանելով առաջադրանքի տեսակը և կառուցվածքը: Այսպես՝ նույն բովանդակությամբ տարբեր առաջադրանքներից պատասխանի տարբերակների համադրումով կարող է ձևավորվել նոր առաջադրանք՝ ըստ հետևյալ օրինակում ցույց տրված սկզբունքի:

Շտեմարանային առաջադրանքներ.

Տվյալ նախադասություններից որո՞նք են դրված Perfekt Aktiv ժամանակաձևով:

Առաջադրանք 1.

1. Die Kinder sind von den Eltern für gute Leistungen gelobt worden.
2. Er hat auf dich unten gewartet.
3. Ein alter Mann ist in ein Geschäft gekommen.
4. Die Oma und der Opa hatten einen großen Garten mit vielen Obstbäumen.
5. Die Schüler haben die Regel mehrmals wiederholt.

Առաջադրանք 2.

1. Zum Mittagessen ist viel Leckeres gekocht und gebacken worden.
2. Vor zwei Jahren haben sie in Gjumri gewohnt.

3. Früher ist sie zu ihren Eltern öfter gefahren.
4. Am nächsten Tag gingen sie nach dem Frühstück zum Fluss.
5. Warum hat dieser Schüler soviel gefehlt?

Առաջադրանք 3.

1. Haben Sie an der staatlichen Universität Jerewan studiert?
2. Das junge Ehepaar war mit seiner neuen Wohnung sehr zufrieden.
3. Von der Schwester ist der Oma eine Tasse Kaffee gebracht worden.
4. Mein Bruder ist immer zu Fuß zur Schule gegangen.
5. Der Gepäckträger hatte für uns zwei Eckplätze am Fenster belegt.

Նոր առաջադրանք

1. Die Kinder sind von den Eltern für gute Leistungen gelobt worden.
2. Der Gepäckträger hatte für uns zwei Eckplätze am Fenster belegt.
3. Haben Sie an der staatlichen Universität Jerewan studiert?
4. Früher ist sie zu ihren Eltern öfter gefahren.
5. Die Schüler haben die Regel mehrmals wiederholt.

Նման փոփոխություններ հնարավոր են ոչ միայն կարճ պատասխանով առաջադրանքներում, այլև ընտրովի պատասխանով առաջադրանքներում:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Բառակազմություն

Ածանցում և բառաբարդում: Գերմաներենի ամենատարածված նախածանցներն ու վերջածանցները՝
գոյականակերտ նախածանցներ՝ **ge-, un-, er-, miss-,**
գոյականակերտ վերջածանցներ՝ **-er, -ler, -ner, -ling, -el, -or, -us, -ismus, -nom, -log, -ist, -ant, -ent, -at, -it, -ot, -heit, -keit, -schaft, -tion, -ung, -ei, -ie, -ik, -ur, -sal, -nis, -um, -tum, -tel,**
ածականակերտ նախածանցներ՝ **un-, ur-, er-,**
ածականակերտ վերջածանցներ՝ **-ig, -lich, -los, -bar, -haft, -en, -ern,**
բայական նախածանցներ՝ **ab-, an-, aus-, bei-, ein-, mit-, nach-, vor-, zu-, be-, ge-, er-, ver-, zer-, ent-, miss-,**
բայական վերջածանց՝ **-ier:**

Շնաբանություն

Հոդ: Որոշյալ հոդի գործածությունը: Անորոշ հոդի գործածությունը: Հոդի բացակայությունը:

Գոյական: Գոյականների թիվը և հոլովումը: Նախադասության մեջ գոյականների գործածությունը տարբեր հոլովներով:

Բայ: Ուժեղ և թույլ բայերի ժամանակային ձևերի կազմությունն ու գործածությունը՝ **Präsens, Imperfekt, Perfekt, Plusquamperfekt, Futurum** ժամանակներով: Հրամայական ձևերի կազմությունը:

Ածական անուն: Ածականների շարահյուսական գործառույթները: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Ածականի հոլովումը:

Մակբայ: Մակբայների իմաստային և շարահյուսական գործառույթները:

Դերանուն: Անձնական, ստացական, ցուցական, հարցական և հարաբերական դերանուններն ու նրանց հոլովումը:

Նախդիրներ: **Genitiv, Dativ, Akkusativ, Dativ և Akkusativ** պահանջող նախդիրները:

Դիմորդը քննության ժամանակ պետք է կարողանա ընկալել և գործածել՝

ա) **Infinitiv**-ի խմբերը և **zu** մասնիկի հետ Invinitiv-ի գործածության հիմնական դեպքերը,

բ) **Präsens, Imperfekt**, **Perfekt, Plusquamperfekt, Futurum** ժամանակային ձևերով դրված Passiv նախադասությունները,

գ) **haben + zu + Infinitiv**, **sein + zu + Infinitiv** կառույցները:

Շարահյուսություն

Հաստատական, ժխտական (nicht և kein), հրամայական և հարցական (հարցական բառերով և առանց դրանց) նախադասությունների գործածությունը: Բայական (նաև անջատվող նախածանցներով) և անվանական ստորոգյալների գործածությունը ժամանակային պարզ և բաղադրյալ ձևերով:

Մոդալ բայերով և **Infinitiv**-ով, խոնարհվող բայով և **zu + Infinitiv**-ով արտահայտված բաղադրյալ ստորոգյալով նախադասությունների գործածությունը:

Ներգործական կերպով կազմություններ: Կրավորական կերպով կառուցվածքների կազմությունը և գործածությունը: **Aktiv** → **Passiv** և **Passiv** → **Aktiv** փոխակերպումների սկզբունքները:

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ: Բարդ ստորադասական նախադասությունների գործածությունը: Երկրորդական նախադասություններ՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, ժամանակի պարագա երկրորդական նախադասություն, պատճառի պարագա երկրորդական նախադասություն, որոշիչ երկրորդական նախադասություն:

Man, es դերանուններով արտահայտված ենթակայով նախադասությունների գործածությունը:

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բանավոր քննությամբ ստուգվում են դիմորդի՝ գերմաներեն լեզվով տեքստի ընկալման կարողությունները և հաղորդակցական հմտությունները:

Բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է 2 հարցից՝

1. կարդալ, թարգմանել և պատասխանել տրված տեքստի վերաբերյալ հարցերին,
2. զրույց առաջադրված թեմայով:

Բանավոր քննության պահանջներն են՝

1. կարդալ տրված տեքստը՝ դրսևորելով ընթերցանության կանոնների իմացություն և հնչյունաբանական գիտելիքների գործնական կիրառման հմտություններ: Դիմորդին տրվող տեքստը համապատասխանում է ավագ դպրոցի համար նախատեսված տնային ընթերցանության նյութերի ծավալին,
2. գրավոր թարգմանել տեքստի նշված հատվածը՝ բառարանի օգնությամբ,
3. պատասխանել տեքստի բովանդակության վերաբերյալ հարցերին:

Քերականորեն ճիշտ ձևակերպելով և տրամաբանորեն զարգացնելով արտահայտած մտքերը՝ զրուցել հետևյալ թեմաների շուրջ.

1. Republik Armenien
2. Jerewan-Hauptstadt von Armenien
3. Meine Heimatstadt (mein Heimatdorf)
4. Bundesrepublik Deutschland
5. Großstädte Deutschlands
6. Die Feste in Deutschland
7. Österreich
8. Die Schweiz
9. Mein Zuhause
10. Meine Freizeit
11. Einkaufen
12. Wenn man krank ist
13. Meine Zukunftspläne
14. Meine Ferien
15. Jahreszeiten
16. Mahlzeiten
17. Internet und andere Kommunikationsmittel
18. Sport, Sportwettkämpfe
19. Mein Lieblingsschriftsteller
20. Mein Lieblingskomponist
21. Eine Reise
22. Hobby
23. Meine Schule (Meine Lehrer)
24. Kino (Theater)
25. Umweltschutz

Բանավոր քննությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1.	տեքստի ընթերցում	0-3 միավոր
2.	թարգմանություն	0-5 միավոր
3.	ընթերցած տեքստի ընկալում	0-6 միավոր
4.	բանավոր հաղորդակցում	0-6 միավոր

Այսպիսով բանավոր քննությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով:

Դիմորդը կարող է բողոքարկել գնահատականը մինչ քննաշենյակից դուրս գալը: Բողոքարկման դեպքում դիմորդին տրվում են լրացուցիչ հարցեր հանձնաժողովի նախագահի կողմից՝ պատասխանը պահանջելով բանավոր կամ գրավոր տեսքով:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ

2018թ. միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Գերմաներեն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

Եղե՛ք ուշադիր

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ընտրովի պատասխանով առաջադրանքներում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 6

Թեստ № 1 2 3 4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	
a																				a
b																				b
c																				c
d																				d

Պատասխանի համարը

	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	
a																				a
b																				b
c																				c
d																				d

Պատասխանի համարը

	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	
a													a
b													b
c													c
d													d

Կարճ պատասխանով առաջադրանքներ

51
52
53
54

Կարճ պատասխանով առաջադրանքներ

55	58	61	64	67
56	59	62	65	68
57	60	63	66	69

Կարճ պատասխանով առաջադրանքներ

		A	B	C	D			A	B	C	D
70					73					77				
71					74					78				
72					75					79				
					76					80				

Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխանի համար

a		
b		
c		
d		

Կարճ պատասխանի համար